

Սոնա Ներսիսյան, Լուսինե Տանաջյան

ԿԱԼԻՆԻՆԳՐԱԴԻ ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՐՁԸ. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ¹

Քանայի բառեր. ինքնություն, ինքնակազմակերպում, սոցիալական միջավայր, կոնսոլիդացիա, համայնքային կազմակերպություն, ներգրավվածություն, էթնիկ համայնք, համախմբվածություն, սփյուռքյան համայնք:

Մուտք. ինքնություն, համայնք և սփյուռք հասկացությունները: Ժամանակակից միգրացիոն տեղաշարժերը հանգեցնում են տարբեր խմբերի և համայնքների կազմի, դրանցում հարաբերությունների բովանդակության փոփոխություններին: Նոր միջավայրում ինքնության ընդհանուր տարրերը և դրանց դրսևորումները նպաստում են էթնիկ խմբի ինքնակազմակերպմանը, որի զարգացման որոշակի մակարդակում որպես կանոն ձևավորվում է համայնք:

Համայնքում ինքնակազմակերպման հիմքը համախմբվածությունն է, որը ձևավորվում է արյունակցական-ազգակցական, հարևանական, համայնական և այլ ինստիտուտների միջոցով: Այս ինստիտուտները կատարում են միջանձնային և միջխմբային փոխհարաբերությունների կարգավորիչի դեր, միաժամանակ ապահովում են խմբի՝ որպես ամբողջության ինքնապահպանումը և վերարտադրությունը: Այս համատեքստում հարկ է անդրադարձնալ համայնք հասկացությանն իր բոլոր կողմերով:

Համայնքը բավականին բազմազան և համակցված երևույթ է: Ըստ մի շարք մոտեցումների համայնքն արտահայտում է ինքնության և պատկանելիության, ընդհանրությունների և տարբերությունների, ներառման և արտամղման, վայրի և ժամանակի հիմնահարցերը, ինչպես նաև դրա ներկայացուցիչների ընդհանուր պահանջները, նպատակները, կենցաղը, կենսագործունեության, աշխարհայացքների, մշակույթի և կոլեկտիվ գործողության ընդհանրության զգացումը²:

Մի շարք մոտեցումներում համայնքը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից.

- աշխարհագրորեն մոտ լինելու հանգամանքով ձևավորված համայնք, որը գործառնում է³ որպես լոկալիզացված սոցիալական համակարգ և կամրջում է սոցիալական խմբերն ու ինստիտուտները⁴,

- համոզմունքների, փորձի կամ ընդհանուր ինքնության հիման վրա ձևավորված հաղորդակցման ձևեր կամ համայնքներ⁵:

Այնուամենայնիվ համայնքում ի հայտ է գալիս համաձայնություն՝ «պատկանելիության» գաղափարի շուրջ: Միևնույն աշխարհագրական տարածքում բնակվելը,

Հոդվածը ներկայացվել է 27.08.2018 թ., գրախոսվել է 15.05.2019 թ., ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:

¹ Հոդվածում ներկայացված են 2018 թ. մայիսին ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի կողմից Գալուստ Կիլպէնկեան հիմնարկության հայկական համայնքների բաժնի դրամաշնորհով Կալինինգրադում իրականացված դաշտային հետազոտության արդյունքները:

² Bell, C and Newby, H (1971): Community Studies: An Introduction to the Sociology of Local Community (London) Allen and Unwin; Cater and Jones (1989), Understanding Community: A review of networks, ties and contacts, Manchester; Crow, G and Allen, A (1994): Community Life: An Introduction to Local Social Relations (Harlow) Pearson Education; Delanty, G (2003): Community (London & New York) Routledge.

Silk, J (1999): Guest editorial: the dynamics of community, place and identity, Environment and Planning A 31, pp. 19-35.

³ Mackenzie, A and Dalby, S (2003): Moving mountains: community and resistance in the Isle of Harris, Scotland, and Cape Breton, Canada, Antipode 35, pp. 309-333.

⁴ Allen, J and Hamnett, C (1995): Introduction, in Allen, J and Hamnett, C (eds.): A Shrinking World? Global Unevenness and Inequality (Oxford) Oxford University Press, pp. 1-10.

⁵ Lave, J (2003): Producing the future: getting to be British, Antipode 35, pp. 492-511.

Radcliffe, S (1999): Reimagining the nation: community, difference and national identity among indigenous and mestizo provincials in Ecuador, Environment and Planning A 31, pp. 37-52.

նույն համոզմունքներ և ինքնություն կրելը դեռևս չի բնորոշում խմբին՝ որպես սոցիալական համայնք:

Համայնքի սոցիալական հարաբերությունների ցանցն իրականացնում է դրա անդամների վարքի համակարգմանն ու կարգավորմանն ուղղված մի շարք գործառնություններ, որոնք կարելի է դիտարկել՝ համապատասխան համայնքի ձևավորման, կայացման փուլերի: Ձևավորման նախնական փուլում համայնքին բնորոշ են առավելապես համախմբման, ռեսուրսի կուտակմանն ու վերաբաշխման գործառնությունները: Դրանք իրականանում են համայնքում վստահության մթնոլորտի ձևավորման և դրա անդամներին սոցիալական երաշխիքների տրամադրման միջոցով: Այս համատեքստում որոշակի սոցիալական խմբի ներկայացուցիչներ միավորվում են համայնքային կառույցներում ինքնակազմակերպման նպատակով: Համայնքային կառույցները հիմնականում իրականացնում են սոցիալական խմբի գործողությունների ուղղության մշակում և կազմակերպում: Որպես համայնքային կյանքի վրա ազդեցություն ունեցող ինստիտուտներ՝ համայնքային կառույցները հաճախ դառնում են միջմշակութային սահմանագիծ և որոշում նաև էթնիկ ինքնության ազդեցության սահմանները:

«էթնիկ սահմանները»¹ հնարավորություն են ընձեռում կարգավորել հասարակական կյանքը, նպաստում են մարդկանց վարքի տարբերակմանը՝ նրանց կողմից վերատարրվող երևույթների միջոցով²: էթնիկ սահմաններն ունեն նաև էթնոպահպան գործառնություն:

Լինելով մշտական շարժման մեջ՝ ինքնությունը կայուն փոխակերպվում է, վերակառուցվում է տարբեր (հաճախ հակադիր) դիսկուրսների, պրակտիկաների շուրջ: Փոփոխվող ինքնությունը, այդուհանդերձ, ձգտում է ներփակման, ներքին համաձայնության³: Ինքնության փոփոխությունները յուրահատուկ ձևով են ընթանում սփյուռքում:

Սփյուռքյան ինքնությունը որոշվում է ազգային, սոցիալական և այլ հատկանիշների բազմազանության, տարբերությունների ընդունման հիման վրա, որը պարբերաբար վերափոխվում է միգրացիոն նոր հոսքերի արդյունքում:

Սփյուռքում մշակութային տարրերը, ազգային ինքնագիտակցությունը հանգեցնում են խմբի անդամների կոնսոլիդացիային, որը կարող է արտահայտվել տարատեսակ ձևերով՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր, ազգային, համայնքային և այլն⁴:

Կոնսոլիդացիան ապահովող գործոններից մեկը համայնքային կառույցներն են, որոնք հանդիսանում են ինքնության կառուցակցման կարևորագույն բաղադրիչ, ի թիվս սոցիալականացման այլ օղակների՝ ընտանիք, սոցիալական միջավայր (ընկեր, հարևան), լեզու, եկեղեցի և այլն:

Սփյուռքի պարագայում համայնքների գործունեությունը հիմնված է սփյուռքում և տվյալ համայնքում գործող կազմակերպությունների, համայնքի անդամների միջև սոցիալական հարաբերությունների և սոցիալական տիրույթի սահմանագծման համընկնման վրա:

Հայկական սփյուռքում համախմբվածությունը և ինքնության պահպանումը հիմնված են ընդհանուր լեզվի և կրոնի, ազգային պետության, կոլեկտիվ հիշողության, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրությունների, շահերի առկայության վրա:

Ինքնության խնդիրը հետաքրքիր է դիտարկել դեռևս ինքնակազմակերպման նախնական փուլում գտնվող համայնքների օրինակով, քանի որ այն հնարավորություն է տալիս հետևել ինքնության կառուցակցման մեխանիզմների սկզբնական փուլին: Այդ

¹ Barth, F (1969): Ethnic Groups and Boundaries, Boston.

² Сумбуева С.Б., К проблеме понимания и интерпретации понятия «этничность», Наука и образование, 2011, N 3, с. 77-81.

³ Frith, S (1996): Music and identity, in Questions of Cultural Identity, eds S. Hall & P. du Gay, Sage, London, pp. 108-126.

⁴ Тощенко Ж.Т., Чаптыкова Т.И., Диаспора как объект социологического исследования, Социологические исследования, N 12, с. 33-42, Москва, 1996.

նպատակով Կալինինգրադի հայերի շրջանում իրականացվել է էթնոսոցիոլոգիական հետազոտություն:

Իրականացված հետազոտությամբ փորձ է արվել վերհանել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ինքնության ձևավորման գործոնները և դրսևորումները ինքնակազմակերպման համատեքստում, և դրանց փոխհարաբերության հարցերը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- խորին հարցազրույց տեղի հայերի հետ, պարզելու համար համայնքային կառույցներում ներգրավվածության, ինքնության տարրերի դրսևորման և այլ կողմեր,
- փորձագիտական հարցազրույց համայնքային կառույցների ներկայացուցիչների և համայնքի կարևոր անձանց հետ համայնքում առկա իրավիճակի, դրանում տարբեր խմբերի գործունեության վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու նպատակով,
- համայնքային կյանքի դիտարկում միջանձնային հարաբերությունների և ներհամայնքային կապերի որոշ առանձնահատկություններ արձանագրելու համար,
- փաստաթղթերի վերլուծություն՝ ներառելով պաշտոնական, վիճակագրական և այլ հասանելի աղբյուրներ, որը թույլ է տվել առավել լայն կերպով ուսումնասիրել Կալինինգրադի հայերի պատմությունը, ներկա իրավիճակը, մարտահրավերներն ու խնդիրները:

Առաջադրված խնդիրների խորքային ուսումնասիրության համար նախ անդրադառնանք համայնքի ձևավորման պատմությանը և առանձնահատկություններին:

Պատմություն և ներկա իրավիճակ: Հայերի ներկայությունը ժամանակակից Կալինինգրադում սկսվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ խորհրդային զինվորներին թույլատրվել է մշտական բնակություն հաստատել Կալինինգրադի մարզում: Պատերազմի մասնակից փոքրաթիվ հայ զինվորներ ևս մնացել են Կալինինգրադում բնակվելու: 1953 թ. Կալինինգրադում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ուստիկանության (միլիցիայի) միջնակարգ մասնագիտացված դպրոցի բացվելուց հետո ուսման նպատակով գրեթե ամեն տարի Կալինինգրադ են ժամանել ազգությամբ հայ երիտասարդներ, որոնց մի մասը մնացել է աշխատելու: Տարբեր տարիներին ԽՍՀՄ զինված ուժերում ծառայող սպայական կազմից շատ հայեր մշտական բնակություն են հաստատել Կալինինգրադի մարզում: Այսպիսով, հայ ազգաբնակչության թվաքանակը Կալինինգրադի մարզում մինչև 80-ականների վերջը կազմել է 150-200 մարդ¹:

Հայերի վերաբնակեցումը Կալինինգրադի մարզում հիմնականում տեղի է ունեցել վերջին 30 տարիների ընթացքում: Նրանց թիվը մարզում ներկայումս կազմում է 14,680 մարդ: Մարզի հայ ազգաբնակչության 61,5%-ը (9028 մարդ) բնակվում է քաղաքներում, 38,5%-ը (5652 մարդ)՝ գյուղական բնակավայրերում: Գյուղական շրջանների հայերի 77,6%-ը (4386 մարդ) Բաքվից, Շահումյանի և այլ հայաթափ շրջաններից եկած գաղթականներ են:

1995 թվականին ՌԴ քաղաքացիություն ունեցող հայերի թիվը Կալինինգրադի մարզում կազմել է 524 մարդ (ամբողջ բնակչության 0,09 %-ը), 1997 թ.՝ 953 մարդ-(0,12 %), 1998 թ.՝ 1620 մարդ (0,19%), 2002 թ.՝ 8415 մարդ (0,88%), 2010 թ.՝ 9226 մարդ (0,98%), 2014 թ.՝ 11478 մարդ (1,13%)²:

Ընդհանուր առմամբ հայերի տեղափոխությունը Կալինինգրադ տեղի է ունեցել 4 հոսքով.

1. առաջին հոսքը ներառում է Սումգայիթի և Բաքվի ջարդերից, Սպիտակի երկրաշարժից հետո Կալինինգրադ տեղափոխված հայերի խումբը (1988-1990 թթ.): Այս շրջանում տեղափոխված հայերին հատուկ է միջնակարգ կամ բարձրագույն կրթություն-

¹ Փորձագետ, տղամարդ, 69 տարեկան:

Փորձագետների հետ հարցազրույցներն իրականացվել են 2018թ. մայիսին ՌԴ Կալինինգրադ քաղաքում: Հետազոտական բոլոր նյութերը պահվում են հեղինակների արխիվում:

² Չևորգյան Ֆ., Կալինինգրադի հայկական համայնքը, տեղեկանք:

Փորձագետ, տղամարդ, 66 տարեկան:

նը, ռուսերեն լեզվի իմացությունը: Վերջինս կարելի է համարել արտագաղթի ուղղությունն ընտրելու առաջնային կողմնորոշիչներից մեկը: Մասնագիտական ներուժի տեսանկյունից այս խումբը բավականին բազմազան է. այստեղ ընդգրկված են ինչպես մանկավարժներ, դասախոսներ, գիտնականներ, այնպես էլ առևտրականներ և բանվորներ: Ներգաղթելով Կալինինգրադ՝ այս խմբի ներկայացուցիչները տեղակայվել են տարերայնորեն, կախված աշխատավայրից, կեցության պայմաններից և այլն: Պետության կողմից այս խմբի՝ առանց հատուկ քաղաքականության ընդունումը, նրանց ցրումը նպաստեցին խմբի տարալուծմանը:

2. Երկրորդ հոսքը ներառում է միջինասիական հանրապետություններում ազգամիջյան լարվածության և Ղարաբաղյան հակամարտության հետևանքով Կալինինգրադ տեղափոխված հայերին (1990-1994 թթ.): Այս հոսքի ներկայացուցիչները, ի տարբերություն նախորդի, առավելապես գյուղական համայնքներից տեղափոխված հայերն են: Այդ պատճառով նրանց վարքն ավելի ավանդական է: Ջբաղմունքը հիմնականում հողագործությունը և/կամ անասնապահությունն է, ինչի հետևանքով նրանք ներգաղթի առաջին փուլում տեղավորվել են Կալինինգրադի գյուղական շրջաններում: Նրանց կոմպակտ տեղակայումը և ավանդական վարքը հանգեցրել են կոնսերվացիայի, ինչի պատճառով մինչ այսօր հստակ սահման է դրվում «տեղացիների» և «եկվորների» միջև: Սա արտահայտվում է ինչպես ամենօրյա ավանդույթներում, այնպես էլ սիմվոլիկ վարքում:

3. Երրորդ հոսքն ընդգրկում է ՀՀ տնտեսական շրջափակման տարիներին Կալինինգրադ տեղափոխված հայերին (1995-2000 թթ.): Սա կարելի է համարել հայերի համեմատաբար ոչ միատարր և չկազմակերպված խումբը, որտեղ ներառված են ինչպես բարձր որակավորում ունեցող, այնպես էլ հատուկ պատրաստվածություն չունեցող մասնագետներ: Ի տարբերություն մյուս խմբերի՝ այստեղ մեծ թիվ են կազմում աշխատանքից խուսափող, անօրինական վարք ցուցաբերող հայերը: Այս վարքը, զուգահեռվելով այդ ժամանակաշրջանի «հակակոլվկասյան» տրամադրությունների հետ, բավականին վատ համբավ են ձևավորել և տարածել հայերի մասին: Վերջինս պատճառ է դարձել, որ այս խումբը ունի ամենաքիչ ներառվածությունը համայնքային կյանք:

4. Չորրորդ հոսքը ներառում է ՌԴ միգրացիոն նոր քաղաքականության և հատուկ ծրագրի իրականացման տարիներին վերաբնակեցված հայերին (2008-2015 թթ.):

Հատկանշական է այն փաստը, որ ներկայումս ՌԴ-ի կողմից իրականացվող «Հայրենակիցների վերաբնակեցման ծրագրի»¹ արդյունքում Կալինինգրադի հայերի թիվը շարունակաբար ավելանում է:

Հայաստանից ժամանած հայերը, ովքեր հանդիսանում են «Հայրենակիցների վերաբնակեցման ծրագիր»-ի մասնակիցներ, անմիջապես Կալինինգրադի մարզ տեղափոխվելուց հետո ստանում են օրինական կացության կարգավիճակ: Մեկ ամսվա ընթացքում, որոշակի փաստաթղթային ձևակերպումներից հետո բոլորը ստանում են ժամանակավոր բնակության և աշխատանքի իրավունք: Անհրաժեշտության դեպքում նրանց մեկ տարի ժամկետով տրվում է կացարան և գրանցում՝ ըստ բնակության վայրի: Վեց ամիս անց ծրագրի մասնակիցներն իրավունք են ստանում դիմել համապատասխան մարմիններին՝ քաղաքացիություն ստանալու նպատակով: Արդյունքում նրանք մեկ տարի անց ստանում են ՌԴ քաղաքացիություն: Ծրագրի մասնակից բազմազավակ ընտանիքները ստանում են նաև «Մայրական» դրամաշնորհ (կապիտալ) և փոխհատուցվում են գույքի տեղափոխման հետ կապված ծախսերի համար: Ծրագրի մասնակիցների հիմնական խնդիրները կապված են աշխատանքի տեղավորման և բնակարանի վարձակալության հետ: Բոլոր նորեկները որպես կանոն փնտրում են բարձր վճարվող, թեթև, «մաքուր» աշխատանք, և հարմարավետ, մատչելի բնակարաններ: Գործատուները հիմնականում խուսափում են ծրագրի մասնակիցներին ընդունել բարձր վարձավ-

¹ «Государственная программа по содействию добровольному переселению в Российскую Федерацию соотечественников»,
https://xn--b1aew.xn--p1ai/mvd/structure/1/Glavnie_upravlenija/guvm/compatriots

ճարով աշխատանքի՝ առանց քաղաքացիության: Որպես կանոն, նորեկների մեծ մասը վերոհիշյալ հարցերով դիմում է տեղի հայ համայնքին: Համայնքային կառույցները փորձում են օգնել՝ օգտագործելով առկա վարչական և անձնական կապերը¹:

Կալինինգրադում հայերն ընկալվում են որպես էթնիկ փոքրամասնություն: Ինքնին խմբի ներսում կան մի շարք ընդհանրություններ. դրանք են ընդհանուր լեզուն, կրոնը, ոչ վաղ պատմական անցյալը (խորհրդային երկրների ծագում, խորհրդային քաղաքացու վարք): Այս ցուցանիշները, սակայն բավականին սուբյեկտիվ են, որպեսզի համարվեն բավարար պայման համայնքային ինքնակազմակերպման համար:

Կալինինգրադի հայերին կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ ելնելով կոմպակտության սկզբունքից:

Առաջին խումբը Շահումյանից տեղափոխված հայերն են: Այս խումբը բավականին համասեռ է, քանի որ խմբի ներկայացուցիչներն ունեն նույն ելքի վայրը, պատճառը և ժամանակահատվածը: Խումբն առանձնանում է բնակավայրի և համայնական գործառնության կոմպակտությամբ, հարաբերությունների խտությամբ և ներփակությամբ:

Երկրորդ խումբը համեմատաբար խառն է՝ ըստ մի շարք չափանիշների (ներգաղթի պատմություն, պայմաններ, նպատակ, բնակության վայր, սոցիալական կարգավիճակ և այլն): Այս հանգամանքը համայնքի ինքնակազմակերպման և ինքնակառավարման ներքին մարտահրավերներից է:

Միաժամանակ անհրաժեշտ է դիտարկել նաև համայնքի արտաքին մարտահրավերները: Դրանք հիմնականում կապված են սոցիալական միջավայրի, պետության կողմից վարվող քաղաքականության հետ: Կալինինգրադում ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող պետական քաղաքականությունն ուղղված է միմյանց միջև հանդուրժողականության և հավասարակշռության ապահովմանը: Վերջինիս ապահովման վերահսկողությունը հաճախ որոշակիորեն սահմանափակում է ազգային ինքնության լիարժեք դրսևորումը:

Ինքնությունը ինքնակազմակերպման համատեքստում: Կալինինգրադում բոլոր էթնիկ համայնքների կողմից ինքնության դրսևորմանն ուղղված նախաձեռնությունները կենտրոնացվում են ազգային-մշակութային ինքնավարությունների² մեջ, որոնք հանդիսանում են տվյալ համայնքի և պետության միջև կապի միակ օղակը (այս պայմաններում կառույցի հիերարխիկ կառուցվածքն անխուսափելի է): Հաշվի առնելով նաև այն փաստը, որ Կալինինգրադի մարզն ունի անկլավային բնույթ, կարելի է նկատել, որ էթնիկ համայնքների կողմից չի դրսևորվում ազգային ինքնության ակտիվություն:

Այս համատեքստում հայկական համայնքի ինքնակազմակերպման գործընթացում առկա են որոշակի անհամաչափություններ՝ ինքնության տարրերի դրսևորումների և միջավայրում դրանց ընկալման միջև: Որպես օրինակ, կարելի է դիտարկել ազգային ինքնության դրսևորման սիմվոլիկ միջոցների (հայալեզու պաստառներ, ցուցանակներ, հուշարձաններ, խաչքարեր և ազգային պատկանելիություն արտահայտող այլ տարրեր) տարրընկալումը կամ դրանց սակավությունը:

Համայնքային ինքնակազմակերպման մակարդակը մեծապես կապված է համայնքում գործող կառույցների և դրանց գործառույթների հետ: Կալինինգրադի դեպքին անդրադառնալով՝ ներկայացնենք գործող համայնքային կառույցները և դրանց գործառույթները: Կարևոր կառույցներից է «Հայկական ազգամշակութային ինքնավարություն» հասարակական կազմակերպությունը, որի մեջ են ընդգրկված «Հայկական գիտատեղեկատվական մշակութային կենտրոն» և «Վերադարձ» ՀԿ-ները: Վերջին տարիներին ակտիվ գործունեություն է սկսել նաև Ռուսաստանի հայերի միության մարզային բաժանմունքը: «Հայկական գիտատեղեկատվական մշակութային կենտրոնը» իր մեջ

¹ Փորձագետ, տղամարդ, 66 տարեկան:

² Ռուսաստանի Ղաշնությունում ազգային-մշակութային ինքնավարությունը ոչ տարածքային ինքնորոշման ձև է, ՌԴ քաղաքացիների միավորում, ովքեր գտնվում են տվյալ տարածքում ազգային փոքրամասնության կարգավիճակում, նույնացնում են իրենց որոշակի էթնիկ համայնքի հետ, կամավոր կերպով ինքնակազմակերպվում են ինքնության պահպանման հարցերի, մշակութային ինքնորոշման, լեզվի, կրթության շուրջ (հմմտ. <http://www.minnac.ru/minnac/info/13882.html>):

ընդգրկում է բազմաթիվ կառույցներ և ստեղծագործական խմբակներ: Դրանք են՝ «Նաիրի վ Կալինինգրադե» երկլեզու մեկամսյա թերթը, Ժողովրդական կոլեկտիվ-«Արմենիա» պարային համույթը, պոեզիայի թատրոնը, հայկական մեկօրյա դպրոցը, «Ինչ, որ տեղ, երբ» ինտելեկտուալ ակումբը և այլն:

Վերջին երեք տարիներին «Հայկական ազգամշակութային ինքնավարություն» հասարակական կազմակերպությունը փաստացի կորցրել է իր կազմակերպական և հասարակական նախաձեռնության հնարավորությունները և աչքի չի ընկնում ակտիվ գործունեությամբ:

Բացի թվարկածներից, համայնքում գործում է նաև Սբ Ստեփանոս հայ առաքելական եկեղեցին, որը միակն է: Փաստացի եկեղեցու շուրջ են տեղակայված համայնքային կառույցները:

Համայնքի ներքին տնտեսական քաղաքականության իրականացման վրա ազդելու միակ միջոցը մարզային ադմինիստրատիվ լծակներն են (տեղական իշխանություններում, օրենսդրական մարմիններում, պետական հիմնարկներում աշխատողները և բիզնես էլիտայի ունեցած կապերը): Վերը նշված մարմիններում առկա ռեսուրսների միջոցով են լուծվում տարատեսակ համայնքային խնդիրները (ընդհուպ մինչև անձնական մակարդակ):

Համայնքային կյանքում հատուկ կարևորություն են ստանում տարբեր նպատակներով իրականացվող իրադարձությունները և միջոցառումները: Համայնքային կառույցները կարևոր գործառույթ իրականացնող օղակներ են, որոնց միջոցով համայնքի ներկայացուցիչները ինքնակազմակերպվում են կամ ներառվում են համայնքային կյանք:

Կալինինգրադի հայկական համայնքը, որպես այդպիսին, սկսել է ակտիվություն ցուցաբերել 2002-2003 թվականներից, երբ ստեղծվել են համայնքային կազմակերպություններ և առանձին մշակութային խմբակներ (պարային խմբակ, գիտատեղեկատվական կենտրոն (տարածաշրջանային հասարակական կազմակերպություն), հրատարակչություն, ամսագիր, թերթ, կիրակնօրյա դպրոց, հասարակական-իրավաբանական խորհրդատվության կենտրոն, տարածաշրջանային երիտասարդական կազմակերպություն): Սա կարելի է համարել այն սկզբնակետը, որից սկսվել է համայնքային գործունեությունը տարբեր ուղղություններով: Համայնքն, ըստ էության, անցել է զարգացման մի շարք փուլեր, որոնք շատ հաճախ զուգորդվել են միմյանց հետ՝ համայնքային կազմակերպությունների ձևավորում, պետական մարմինների հետ կապերի հաստատում, հայկական համայնքների հետ հարաբերությունների սերտացում, այլ էթնիկ փոքրամասնությունների հետ մերձեցում, Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդում: Ըստ հարաբերությունների հաստատման և կապերի ընդգրկման շրջանակի՝ կարելի է առանձնացնել երեք հիմնական ուղղություն՝ Հայաստանի հետ կապեր, հայ-ռուսական հարաբերություններ, այլազգի խմբերի հետ հարաբերություններ:

2002-2017 թթ. ընկած ժամանակահատվածում համայնքում իրականացված միջառույթներն ու իրադարձությունները նպատակ են ունեցել լուծելու մի շարք խնդիրներ.

- ճանաչելի դարձնել հայկական մշակույթը համայնքի ներկայացուցիչների շրջանում,
- տեղի բնակիչների հետ հաստատել կապեր և ծանոթացնել, ի ցույց դնել հայկական մշակութային և ազգային տարրերը,
- նպաստել համայնքային ինքնակազմերպմանն և համախմբանը,
- իրականացնել հայկական ինքնության պահպանմանն ուղղված ծրագրեր՝ շեշտադրելով որոշ կարևոր ատրիբուտներ (մասնավորապես՝ ազգային հերոսներ, տոներ, Ցեղասպանություն, հայոց լեզու, եկեղեցի, հայկական ավանդույթներ, ազգային պարեր, ազգային պետություն),
- ստեղծել նոր հարբերությունների և շփումների հարթակ՝ միջոցառումներում ներգրավելով տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի,
- նպաստել Հայաստանի հետ համայնքային կապերի ամրապնդմանն ու մերձեցմանը,

- կազմակերպել տվյալ միջավայրում ինտեգրմանն ուղղված միջացառումներ, այլ էթնիկ խմբերի հետ հանդիպումներ, բարելավել հայ-ռուսական հարաբերությունները,

- սերմանել հանդուրժողականություն տարբեր ազգերի նկատմամբ՝ տարբեր մշակույթների ներկայացման և համատեղ երեկոների միջոցով,

- ապահովել նոր ներգաղթած հայերի ինտեգրումը համայնքային կյանքում՝ իրավաբանական խորհրդատվությունների և սոցիալական աջակցության միջոցով:

Հետաքրքիր է դիտարկել միջացառումների իրականացման դինամիկան տարիների ընթացքում: Այս առումով պետք է նշել, որ գրեթե միշտ արդիական են եղել մշակութային և Ցեղասպանությանը նվիրված իրադարձությունները: Միջոցառումների իրականացման աճ է նկատվել առավելապես կառույցների ստեղծման փուլում (2003 թ.), ապա 2010-2012 թթ.¹ ուղեկցվելով թեմաների լայն ընդգրկվածությամբ, այնուհետև շատ բարձր ակտիվություն է նկատվում 2004-2009 թթ., իսկ 2013 թվականից միջացառումների քանակը և թեմաները համեմատաբար նվազել են¹: Ներկայումս համայնքում գործող կառույցների կողմից նույնպես կազմակերպվում են մի շարք միջոցառումներ՝ ընդգրկելով ինչպես նոր թեմաներ, այնպես էլ շարունակելով նախկինում ավանդաբար իրականացվողները: Այնուամենայնիվ, դրանք հիմնականում ներառում են առավելապես մշակութային ուղղվածություն:

Համայնքային կազմակերպությունների գործունեության ամենակարևոր ցուցանիշներից մեկը կազմակերպությունների կամ միջոցառումների ընդգրկումն է, համայնքի անդամների ներգրավվածությունը դրանցում: Այս առումով համայնքի ներկայացուցիչները նշում են մի շարք խնդիրներ. որոշ փորձագետների պնդմամբ անհրաժեշտ է կազմակերպել համայնք-պետություն, ինչպես նաև համայնքի անդամների միջև եղած կապերի ամրապնդմանն ուղղված միջոցառումներ: Փորձագետների մյուս մասն ընդգծում է Կալինինգրադի հայերի շրջանում համայնավարման մշակույթը զարգացնելու անհրաժեշտությունը: Համայնքի ներկայացուցիչները պնդում են, որ համայնքային կառույցներում և կազմակերպվող միջոցառումներում ներառվելու միակ նախապայմանը դրանց որակն է և բազմազանությունը:

Կալինինգրադի հայ համայնքում գործող կազմակերպություններն ունեն մի շարք առանձնահատկություններ: Այստեղ հարկ է անդրադառնալ դրանց գործառնության խնդիրն՝ մասնավորապես որակական կողմին:

Սփյուռքում համայնքային կառույցները իրականացնում են ռեսուրսի գնահատման, կուտակման և վերաբաշխման, կարիքների գնահատման և եղած խնդիրների հաղթահարման մեխանիզմներ մշակելու կարևոր գործառնություններ: Վերջիններս Կալինինգրադի հայ համայնքում թույլ են զարգացած և մասամբ են իրականացվում:

Համայնքային կազմակերպություններն իրենց գործունեությունը կազմակերպում են առավելապես դեկլարատիվ կերպով, որի արդյունքում դժվար է ապահովել համայնքի անդամների բարձր ներգրավվածություն: Կալինինգրադի համայնքային կառույցներն ունեն բարձր անձնավորվածություն՝ թույլ կազմակերպական կառուցվածքի հաշվին, ինչը սահմանափակում է համայնքի բոլոր խմբերի ներկայացվածության ապահովումը:

Այդուհանդերձ անհրաժեշտ է նշել նաև, որ համայնքի առանձին ներկայացուցիչներ գրեթե չունեն սեփական նախաձեռնություններն իրականացնելու հնարավորություն (օրինակ՝ անհատական ծրագրերի ֆինանսավորման համար) և իրենց գործունեությունն իրականացնում են համայնքային կազմակերպությունների միջոցով. դրանք հնարավորություն ունեն ստանալ ֆինանսապահանջ աջակցություն պետական իշխանությունների կողմից:

«Հայ համայնքին, ազգային հասարակական կառույցներին հատկացվող պետական աջակցությունն իրականացվում է դրամաշնորհների միջոցով: Մարզի համայնքային հասարակական կառույցներին դրամաշնորհներ են հատկացվում տեղական ինք-

¹ Համայնքի փորձագետ, տղամարդ, 66 տարեկան:

նակառավարման զարգացման և ներքին քաղաքականության, մշակույթի նախարարությունների կողմից: Անհատներին դրամաշնորհներ են հատկացվում էկոնոմիկայի, գյուղատնտեսության և արդյունաբերության նախարարությունների կողմից: Հիմնականում դրամաշնորհներ են ստանում հասարակական կազմակերպությունները»¹:

Բացի վերոհիշյալից կարելի է նշել նաև մի շարք «ներհամայնքային» գործոններ, որոնք Կալինինգրադի հայ համայնքը դարձնում են առանձնահատուկ: Վերջինս պայմանավորված է համայնքային կազմակերպությունների տեսակով և բնույթով: Հայկական սփյուռքում գործող միջազգային, հովանոցային տեսակի կազմակերպություններից որևէ մեկը չի գործում համայնքում:

Կալինինգրադի հայահոծ շրջաններում գործող համայնքային կառույցներն ընդհանուր առմամբ միմյանց հետ կապված են և պարբերաբար կազմակերպում են հանդիպումներ և միջոցառումներ: Սակայն ՌԴ մասշտաբով մարզերի, քաղաքների համայնքների միջև եղած կապերը թույլ են զարգացած: Դրա պատճառն այն է, որ չկան համայնքային ինստիտուցիոնալ հարաբերություններ: Ինքնակառավարումը առանձին շրջաններում և շփումը միմյանց միջև առավելագույնս անձնավորված է և սահամանափակվում է անհատական պատասխանատվությամբ: «Ամեն մի շրջանի կենտրոնում և քաղաքում հեղինակավոր տղաներ ունենք, որոնք կամ դեպուտատ են, կամ հարգված մարդ են, ծեռներեց են, շրջապատ ունեն, անուն ունեն, ճանաչված են և իրենց միջոցով ենք հարցեր լուծում»²:

Այսպիսով, Կալինինգրադի հայ համայնքը իրավամբ կարելի է համարել էթնիկ համայնք, սակայն այն, որպես սփյուռքյան համայնք, դիտարկելու համար անհրաժեշտ է ինքնակազմակերպման այլ մակարդակ:

Խնդիրներ, մարտահրավերներ, հեռանկարներ: Համայնքի զարգացման համար անհրաժեշտ է մի շարք խնդիրների և մարտահրավերների հաղթարում: Վերջինիս կարևորությունն ընդգծվել է համայնքի ներկայացուցիչների, փորձագետների կողմից: Առանձնացվել են մի քանի խումբ խնդիրներ և դրանց լուծման հնարավոր ուղիներ:

Մի շարք խնդիրներ վերաբերում են միջավայրային, սոցիալ-մշակութային հարցերին: Համայնքի ներկայացուցիչները նշում են, որ «Չնայած Կալինինգրադում տարբեր մշակույթների ներկայացուցիչների առկայությանը՝ միևնույնն է այստեղ տիրում է «մշակութային սով»³: Վերջինս կարող է բացատրվել այն հանգամանքով, որ ռուսաստանյան մասսայական մշակույթը գերիշխող է, ինչի հետևանքով ստվերում է բազմամշակութայնությունը: «Դուք այստեղ չէք գտնի օտար լեզվով մի գրություն հանրային վայրերում, դուք այստեղ, եթե ժամերով քայլեք, չէք լսի օտար երաժշտություն, այլ կլսեք շատ հին՝ 90-ականների ռուսական փոփ երաժշտություն, դուք այստեղի ռադիոյով ու հեռուստատեսությամբ որևէ այլ մշակույթի թողարկում չէք լսի»:

Այստեղ կարելի է ասել, որ ընտելացման նախնական փուլում Կալինինգրադում մշակույթների բանակցությունները բացակայում են: Վերջինս հատուկ «տարալուծող» քաղաքականության հետևանք է, որի արդյունքում տարբեր խմբերի ներկայացուցիչների կողմից սեփական մշակույթի դրսևորման նախաձեռնողականությունը պասիվանում է: Այդպիսով որոշ ժամանակ անց տարբեր խմբերի մոտ մշակութային բազմազանության պահանջունքը նվազում է, և նրանք ներառվում են մեկ ընդհանրացված մշակույթի մեջ:

Նշված խնդիրներից հեռանալու համար համայնքի ներկայացուցիչները հնարավոր ուղի են համարում այցելությունը համայնքային կենտրոն: Սակայն վերջինս չունի բավարար ռեսուրսներ. ««Համայնքում»⁴ տարբեր խմբակների, միությունների պակաս է զգացվում, ինչպես օրինակ՝ չկա առանձին ակումբ մեծերի համար»⁵: Համայնքում նման

¹ Փորձագետ, տղամարդ, 66 տարեկան:

² Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, տղամարդ, 69 տարեկան:

³ Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, կին, 31 տարեկան:

⁴ Կալինինգրադի համայնքի ներկայացուցիչները «Համայնք» անվանում են եկեղեցու շրջակայքում տեղակայված հայկական համայնքային կենտրոնը:

⁵ Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, կին, 53 տարեկան:

կառույցների, հարթակների առկայությունը մի կողմից կապահովի Կալինինգրադի հայերի տարբեր խմբերի ներգրավումը համայնք, մյուս կողմից կնպաստի նրանց միջև հաղորդակցման և փոխհարաբերությունների բարելավմանը: Վերջինս կարող է նաև բարձրացնել համայնքում սոլիդարության մակարդակը՝ հաշվի առնելով հայացքների, մտածողության, սովորույթների և այլ բարքերի տարբերության հանգամանքը: «Ավելի վաղ շրջանում բնակություն հաստատած հայերը վերջին 25 տարվա ընթացքում ժամանած նորեկների նկատմամբ լոյալ վերաբերմունք ունեն, սակայն աշխատում են քիչ շփվել: Հնաբնակները զգուշավոր, շատ դեպքերում բացասական են վերաբերվում Հայաստանի ու տեղական մարմինների հասցեին ուղղված նորեկների սուր քննադատություններին և հայրենիքից իրենց հեռանալու պատճառաբանությանը»¹:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ներհամայնքային կյանքը մեծապես կապված է Կալինինգրադում առկա ընդհանուր հանդուրժողականության մթնոլորտի հետ:

«Մարզում նկատվում է ռուսների և այլազգիների միջև տարբերություն դնելը: Միայն վերջին տարիներին են սովորել մեզ տարբերել ասենք վրացիներից, ադրբեջանցիներից, նույնիսկ դադստանցիներից: Մինչ այդ մենք իրենց համար նույնն էինք՝ կովկասցիներ, սևեր, երբեմն էլ նույնիսկ վիրավորական ձևով էին անվանում»²:

Անհանդուրժողականության նման ձևակերպումը իրականում տարածվում է վերևից ներքև սկզբունքով և կրում է արհեստական բնույթ: Սրա պատճառն այն է, որ անհանդուրժողականությունը հիմնված է արհեստականորեն շրջանառության մեջ դրվող կարծրատիպերի և նարատիվների վրա: Այն դրսևորվում է ոչ թե ազգերի միջև, այլ ռուսականից տարբեր մշակույթների նկատմամբ:

Խնդիրների հաջորդ խումբը վերաբերում է իրավական, փաստաթղթային, կարգավիճակային հարցերին, որոնք առաջանում են տեղափոխությունից անմիջապես հետո: Տեղի իշխանությունների կողմից հատկապես ուշադրության կենտրոնում են գտնվում անօրինական բնակվողները, որոնց կացության կարգավիճակ տրամադրելու համար որոշակի աշխատանքներ են տարվում: «Գյուղական բնակչության շրջանում քիչ չեն օրինական կարգավիճակ ստանալու նկատմամբ անտարբեր վերաբերմունք ունեցողները, ովքեր արդեն բնակվում են յոթ և ավել տարիներ, կան նաև այնպիսիները, ովքեր ժամկետանց անձնագրով կամ առանց դրա են բնակվում»³:

Առանց որևէ հատուկ ծրագրի՝ անձնական նախաձեռնությամբ Կալինինգրադ տեղափոխված հայերը ավելի լուրջ դժվարությունների են հանդիպում: Այս պարագայում հիմնական լուծումը դառնում է աշխատանքային միզրանտի կարգավիճակ կամ սեզոնային աշխատանքի պայմանագրի հիման վրա աշխատանքի թույլտվություն ստանալը: Սակայն պայմանագրի կամ ՌԴ-ում գտնվելու թույլտվության ժամկետի ավարտից հետո պարտավոր են վերադառնալ Հայաստան, այլ պարագայում ենթարկվում են արտաքսման:

Նմանատիպ խնդիրների լուծման նպատակով հայկական համայնքը ակտիվ կապ է պահում Սանկտ-Պետերբուրգի ՀՀ գլխավոր հյուպատոսության հետ, որը համայնքի խնդրանքով եռամսյա պարբերականությամբ ընդունելություն է կազմակերպում մարզում գտնվող ՀՀ քաղաքացիների համար: Դրա շնորհիվ Հայաստանին առնչվող փաստաթղթային ձևակերպումների կամ տեղեկանքների հետ կապված խնդիրները գրեթե բացակայում են: Այնուամենայնիվ, կան մի շարք հարցեր, որոնց լուծումը համայնքի ներկայացուցիչները կապում են ՀՀ անմիջական միջամտության հետ: «Հայաստանը պետք է իր կողմից օգնի տարբեր ծրագրերով, ֆինանսապես, որ մեր համայնքային կառույցներն ավելի զարգանան: Մենք այլ հնարավորություն չունենք զարգանալու. այստեղ չկան ավանադական կուսակցություններ կամ եկեղեցիներ՝ իրենց հովանավորներով ու առանձին շահերով: Մենք մեր հույսը միայն մեզ վրա կարող ենք դնել, մեկ էլ եր-

¹ Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, կին, 58 տարեկան:

² Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, կին, 34 տարեկան:

³ Փորձագետ, տղամարդ, 66 տարեկան:

կու պետությունների: Հիմա, եթե մեզ ինչ-որ բան է հարկավոր, դիմում ենք ՌԴ պետությանը, ով մեզ օգնում է, բայց և դնում իր որոշակի պայմանները»¹: Արդյունքում օգնություն ստանալու համար Կալինինգրադի հայերը հայտնվում են ՌԴ-ից կախյալ վիճակի մեջ, այնինչ իրականացվող գործունեության մեծ մասը կարող է հեռանալ այդ երկրի շահերից կամ նույնիսկ հակասել դրանց: Այս պարագայում շոշափելի է դառնում Հայաստանի աջակցության կարիքը, առաջին հերթին կազմակերպական անկախություն ձեռք բերելու համար:

Համայնքի կազմակերպական կառուցվածքում առանձնահատուկ տեղ ունեն կրթության հետ կապված հարցերը և ուսումնական հաստատությունները:

Կրթության ոլորտի խնդիրներից խոսելիս պետք է նշել, որ դրանք այլ կերպ են ընկալվում համայնքի տարբեր խմբերի կողմից: Փորձագետներն այն դիտարկում են ինստիտուցիոնալ մակարդակում՝ ընդգծելով կրթական հաստատությունների համայնքաստեղծ, կարգավորող գործառույթը:

«Երբ ստեղծվում էր համայնքային այս կենտրոնը, մեր համայնքի կողմից բացթողում էր, որ զուգահեռ չկառուցեցինք նաև դպրոցը, մտածեցինք երեխաների այցելությունը կշատանա՝ կկառուցենք, բայց գնալով հակառակը կատարվեց: Ու հիմա նոր ենք հասկանում դրա կարևորությունը»²:

Համայնքի այլ ներկայացուցիչների կողմից կրթական խնդիրները դիտարկվում են այլ՝ առավելապես կենցաղային տեսանկյունից: «Հայկական դպրոց է պետք, որովհետև մենք չենք հասցնում երեխաներին այդքան տանել-բերել, զբաղված ենք, նաև երեխաները չեն հասցնում իրենց (ռուսական) դպրոցի դասերին զուգահեռ»³:

Ելնելով ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ երեխաների հայկական ինքնության պահպանումը երկրորդական տեղ է զբաղեցնում համայնքի ներկայացուցիչների իրական դրդապատճառներում: Հայկական միջավայրի ստեղծման պահանջը հիմնականում ստորադասվում է սոցիալական, ավելի լայն հնարավորություններ ապահովող միջավայրին:

Նրանց համար, որոնք Կալինինգրադում են հաստատվել ավելի երկար ժամանակ, «ընդհանուր առմամբ հանրակրթությունը Կալինինգրադում բավականին բարձր մակարդակի է. բազմակողմանի ու խոր գիտելիքներ են տալիս, երեխաները դիմորդի տարիքում արդեն բավականին կողմնորոշված են ու պատրաստված. սա մեծամասամբ մրցակցության արդյունքն է»⁴: Փոխարենը, նորեկների համար ավելի դժվար է: «Քանի որ տեղափոխվելուց հետո մի քանի ամիս կամ նույնիսկ տարի է պահանջվում նոր դպրոցներին, ծրագրերին ծանոթանալու, լեզվին ադապտացվելու համար. դա հետ է գցում երեխայի զարգացումն ու առաջընթացի շանսերը»⁵:

Դրան զուգահեռ, համայնքում հայկական դպրոցի ստեղծման կարևորությունը նշվում է բոլոր խմբերի կողմից: «Թող լինի լրիվ հայկական դպրոց, օրինակ, խորացված ռուսերենով, բարձր մակարդակով: Թեկուզ վճարովի լինի, վստահ եմ շատերը պատրաստ կլինեն այդքան լրացուցիչ պարապմունքների փոխարեն վճարել դպրոցի համար: Թող նախարարությունն օրինակ, օգնի ծրագրերի ու դասագրքերի հարցով, իսկ մասնագետներ այստեղ կան, թեկուզ փոքր մասշտաբի դպրոց»⁶:

Փորձագետների գնահատմամբ՝ մյուս կարևոր հարցը համայնքի կարիքների ու ներուժի գնահատումն է: Կալինինգրադի հայ համայնքի զարգացման, հնարավորությունների բացահայտման համար պետք է նախ և առաջ ունենալ համայնքի ընդհանուր պատկեր, որտեղ կարտահայտվի տեղի հայ բնակչության (անկախ համայնքում ներգրավվածության աստիճանից, բնակության տևողությունից, ելքի երկրից կամ քաղաքից) կարիքները, հնարավորությունները, ունեցած ներուժը: «Մարդահամար պետք է արվի,

¹ Փորձագետ, տղամարդ, 45 տարեկան:

² Փորձագետ, տղամարդ, 69 տարեկան:

³ Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, կին, 32 տարեկան:

⁴ Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, կին, 31 տարեկան:

⁵ Փորձագետ, կին, 57 տարեկան:

⁶ Կալինինգրադի հայ համայնքի ներկայացուցիչ, կին, 34 տարեկան:

որպեսզի կարողանանք տեսնել, թե որ մասնագետից ինչքան ունենք, որպեսզի ըստ այդմ կարողանանք մեր ներուժը տեսնել այստեղ: Պաշտոնական տվյալներ կան, բայց մեզ հասանելի չեն: Այս մարդահամարի նպատակը այն է, որ մեզ մի քիչ քաղաքական ուժ դարձնենք, որ մասնակցենք ընտրություններին, մեր ներկայացուցիչներն ունենանք, մեր ձայնը լսելի դարձնենք»¹:

Անփոփում: Կալինինգրադի հայերն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորել են հայերի, որպես համայնքի, ինքնակազմակերպման յուրահատուկ գործընթացը: Առանձնահատկություններից առաջինը կապված է հայերի տարբեր հոսքերի և խմբերի առկայության հետ, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել յուրատեսակ ինքնության ձևավորման վրա: Կալինինգրադի հայերի տարբեր խմբեր կրում են առանձին ինքնության տարրեր, որի հետևանքով սահմանափակվում է նրանց լիարժեք ներառումը ընդհանուր համայնքային միջավայր: Համայնքում բացակայում է այսպես կոչված «միջուկ» խումբը, որը կունենա բոլոր խմբերին բնութագրող ընդհանուր ինքնության տարրեր: Միաժամանակ, հաշվի առնելով հայերի շարունակական ներհոսքը Կալինինգրադի հայերի ինքնությունն, այդուհանդերձ, գտնվում է փոփոխվող և անկայուն վիճակում: Այս բոլոր գործոնների արդյունքում, կարել է ասել, որ Կալինինգրադի հայերի մոտ ձևավորվել է խառը ինքնություն:

Հաջորդ առանձնահատկությունը կապված է Կալինինգրադի հայ համայնքի կազմակերպական կառուցվածքի հետ: Այն ներառում է հայերի շրջանում տարբեր խմբերի միջև փոխհարաբերությունները, համայնքային ներգրավվածությունը և ակտիվությունը, գործող կառույցները ու դրանց միջև կապերը և այլն: Կառուցվածքային առումով Կալինինգրադի հայերի մոտ բացակայում են ինստիտուցիոնալ լծակներ, որոնք կապահովեն անհրաժեշտ ռեսուրսներ ինքնակազմակերպման համար: Կալինինգրադի հայ համայնքի կազմակերպական կառուցվածքի բովանդակային առանձնահատկությունն այն է, որ առկա է համայնքային խնդիրների լուծման ոչ ֆորմալ մեխանիզմ, որն անձնավորված է և դեռևս չունի ինստիտուցիոնալացման բավարար մակարդակ: Այսպիսով, կարելի է պնդել, որ Կալինինգրադի հայերը գտնվում են համայնքային ինքնակազմակերպման ցածր մակարդակում:

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ ինքնության կառուցակցման և ինքնակազմակերպման մակարդակները փոխկապված են: Չնայած այն հանգամանքի, որ Կալինինգրադի հայերն ունեն ընդհանուր ինքնության գիտակցում և դրա կառուցակցման որոշակի մեխանիզմ, սակայն համայնքը դեռևս գտնվում է ինքնակազմակերպման և ինքնության կառուցակցման նախնական փուլում:

Сона Нерсисян, Лусине Танаджян, ОПЫТ САМООРГАНИЗАЦИИ АРМЯН КАЛИНИНГРАДА: ВОПРОСЫ ИДЕНТИЧНОСТИ. Калининградские армяне имеют ряд особенностей, которые обуславливают уникальный процесс самоорганизации армян как общины. Первая из особенностей связана с наличием различных потоков и групп армян, которые оказали свое влияние на формирование их идентичности. Различные группы калининградских армян имеют отдельные элементы идентичности, которые ограничивают их полную вовлеченность в общую общинную среду. В общине отсутствует так называемая «базовая» группа, которая будет иметь элементы общей идентичности, характерные для всех групп. В то же время, учитывая продолжающийся приток армян в Калининград, идентичность армян, однако, находится в меняющемся и неустойчивом состоянии. В результате всех этих факторов можно сказать, что калининградские армяне имеют смешанную идентичность.

Следующая особенность связана с организационной структурой армянской общины Калининграда. Он включает взаимоотношения между различными группами в армянской общине, участие и активность общины, существующие структуры и связи между ними и т. д. Со структурной точки зрения у калининградских армян от-

¹ Փորձագետ, տղամարդ, 69 տարեկան:

существуют институциональные рычаги, которые обеспечат необходимые ресурсы для самоорганизации. Качественная особенность организационной структуры армянской общины в Калининграде заключается в том, что существует неформальный механизм решения общинных проблем. Этот механизм персонализирован и еще не имеет достаточного уровня институционализации. Таким образом, можно утверждать, что калининградские армяне находятся на низком уровне общинной самоорганизации.

В целом можно сказать, что уровни формирования идентичности и самоорганизации взаимосвязаны. Несмотря на то, что калининградские армяне имеют восприятие общей идентичности и определенный механизм ее развития, община все еще находится на начальной стадии самоорганизации и формирования идентичности.

Ключевые слова: Идентичность, самоорганизация, социальная среда, консолидация, общинная организация, социальное включение, этническая община, сплоченность, диаспоральная община.

Sona Nersisyan, Lusine Tanajyan, SELF-ORGANIZATION EXPERIENCE OF KALININGRAD ARMENIANS: IDENTITY ISSUES. The Kaliningrad Armenians have a number of features which cause particular process of Armenians' self-organization as community. The first of features is connected with the existence of different Armenians' groups and flows, which had an impact on their specific identity formation. Different groups of the Kaliningrad Armenians have separate elements of identity. As a result, their full integration into the common environment of community is limited. In community there is no so-called "basic" group which will have the elements of the common identity characterizing all groups. At the same time, considering the Armenians' continuing migration to Kaliningrad, Armenians' identity, however, is in the changing and unstable state. As a result of all these factors it is possible to say that the Kaliningrad Armenians have the mixed identity.

The following feature is connected with organizational structure of the Armenian community of Kaliningrad. It includes interrelations between Armenians' various groups, participation and activity of community, organizations and connections between them, etc.

In structural sense the Kaliningrad Armenians have no institutional levers that will provide necessary resources for self-organization. The qualitative feature of organizational structure of Armenian community of Kaliningrad consists in the following: there is an informal solving mechanism of community problems, which is personalized and has no sufficient institutionalization yet. Thus, it is possible to claim that the Kaliningrad Armenians are at a low level of community self-organization.

Overall the levels of identity construction and self-organization are interconnected. In fact, it can be said that the Kaliningrad Armenians have perception of a common identity and a certain mechanism for its formation. Despite this, the community is still at the initial stage of self-organization and identity formation.

Key Words: Identity, self-organization, social environment, consolidation, community organization, social inclusion, ethnic community, cohesion, diaspora community.